ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Սահակյանի, Գագիկ Մելիքյանի, Վահրամ Մկրտչյանի և Լևոն Մարտիրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-800-29.05.2015-ՊԻ-010/0 և Պ-800[1] - 29.05.2015-ՊԻ-010/0) վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, առաջարկում ենք՝

1. Նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

1) «վերնագրում «ցուցմունք» բառից հետո լրացնել «կամ սահմանադրական դատարանի նիստում վկայի կողմից սուտ բացատրություն» բառերով:».

2) նախագծի ամբողջ տեքստում «ցուցմունք» բառից հետո դրված փակագծերը փոխարինել «կամ» բառով:

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<< Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը

1. <<Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Նախագծերի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունմամբ կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրել դրույթ, համաձայն որի պատասխանատվություն է սահմանվում սահմանդրական դատարանի նիստում վկայի կողմից սուտ բացատրություն տալու համար:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագծով առաջարկվում է համապատասխանեցնել օրենսդրությամբ առկա հակասությունները, մասնավորապես նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, համաձայն որի պատասխանատվություն է սահմանվում սահմանդրական դատարանի նիստում՝ վկայի կողմից սուտ բացատրություն տալու համար, և* Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

ՀՀ օրենքների վերոնշված նախագծերի ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-800-29.05.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 337-րդ հոդվածում.

1) վերնագրում «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից բացատրություն)» բառերով,

2) դիսպոզիցիայում «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից բացատրություն)» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 338-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սահմանադրական դատարանի նիստում վկայի կողմից սուտ բացատրություն տալը, քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով սուտ ցուցմունք տալը, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալը, սահմանադրական, քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը՝ »,

2) 3-րդ մասում «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից սուտ բացատրություն)» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 339-րդ հոդվածում.

1) վերնագրում «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից բացատրություն)» բառերով,

2) 1-ին մասի դիսպոզիցիայում «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից բացատրություն)» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 340-րդ հոդվածում.

1) վերնագրում «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից սուտ բացատրություն)» բառերով,

2) 1-ին մասի դիսպոզիցիայում առաջին «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից սուտ բացատրություն)» բառերով,

3) 2-րդ մասի դիսպոզիցիայում «ցուցմունք» բառը փոխարինել «ցուցմունք (սահմանադրական դատարանի նիստում՝ վկայի կողմից սուտ բացատրություն)» բառերով,

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-800[1]-29.05.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 54-րդ հոդվածի 3-րդ մասի «ակնհայտ կեղծ» բառերը փոխարինել «սուտ» բառով:

Հոդված 2. Օրենքի 55-րդ հոդվածի «ակնհայտ կեղծ» բառերը փոխարինել «սուտ» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգքում եւ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա հակասությունները եւ բացերը վերացնելու անհրաժեշտությամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փորձագետը նիստը նախագահողի կողմից նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու եւ եզրակացություն տալուց հրաժարվելու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին, 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վկան նիստը նախագահողի կողմից նախազգուշացվում է ակնհայտ կեղծ բացատրություն տալու եւ բացատրություն տալուց հրաժարվելու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին, 55-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական դատարանում ակնհայտ կեղծ եզրակացություն կամ ակնհայտ կեղծ բացատրություն տալը կամ թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը, ինչպես նաեւ եզրակացություն եւ բացատրություն տալուց հրաժարվելն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Մինչդեռ, ՀՀ քրեական օրենագրքի համապատասխանաբար 337-րդ 338-րդ 339-րդ եւ 340-րդ հոդվածներով համապատասխան պատասխանատվություն նախատեսված չէ:

Հաշվի է առնվել այն համգամաքը, որ ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված ոչ թե՝ ակնհայտ սուտ ցուցմունք, այլ՝ սուտ ցուցմունք տալու համար: